կային տեսութիւնէ հետի՝ այս բարձրաբերձ լեռան տափարակներու մէջ ապահով կարածեն վայրի Նոխազք, որոյ անուամբ ևս քրդեր Թէքքէ-Բինէ (Նոխազանց բնակարան) յորջորջած են։ Երկու Թէքքէ-Բիններն ևս իրենց հարաւն պատած են անմատչելի բնական ամրոցներ, որոց իւրաքանչիւրն կարող է պատսպարել 50,000 տուն։ Երկու ճանապարհներով կարելի է 3—5 ժամ մագլցելով բարձրանալ այսր, և մի այլ ճանապարհով ևս մեծ դժուարութեամբ անասուն բարձրացնելով, սակայն իւրաքանչիւր նեղ անցքի վերայ բաւական է 2—3 մարդ ամբողջ բանակի մը դէմ։

Ընթերցողք, մեծ ճիք ու ջանք թափենք, բարձրանանք այս բնական ամրոցն, բաղդատենք այս վայրի ամրոցն մարդկայիններու հետ, տարբերութիւնը պիտի գտնենք այնպէս՝ որպէս մարդկային ամրոցներ երկնից մօտ. դուն ուրէք մարդկային երես տեսնող եղևնիք աճած են ցցելով իրենց գագաթներն յերկինս, սորանց հետևած՝ բարակ, ուռի, հացի, թիւքի ևն. հազարաւոր անպտուղ ծառեր, իսկ խոնարհ սփռուած պտղալից մասուր, քարջին, դառնիջ, ծոր, շլոր, ալուճ, մինալուճ, ևն. պտուղ արտադրող ծառեր ու թփերն։ Ջրերն այս ու այն կողմ կղլզան, ծաղիկները և կանաչ երփներանգ գոյներով զարդարուած, շուրջդ կը տեսնես նոխազը թաղուած է հասակաւոր խոտի մէջ՝ աներկիւղ կարածէ, 1—2 կանգուն բարձր կրնակի վերայ կեռացած եղջիւրներն միայն կը տեսնես, սորա շուրջը ևս խոտերն ճեղքելով ալիքներ կը կազմեն, մենք ևս հարիւրաւոր տարուայ չորացած դաղալներու կակուղ խաւը կոխոտելով յուշիկ մերձենանք, եթէ որոց ուշադրութիւնը չը գրաւենք, պիտի տեսնենք ձագուկներէն մին առջի